

Հայոց եկեղ. երաժշտութիւնը քրիստոնէութեան սկզբից մինչև այժմ նոյն հիմքն է ունեցել: Նա ծագում է հեթանոսական մեհակային երգեցողութիւնից: Իսկ վերջինս ժողովրդականից: Եկեղեցական և ժողովրդական երաժշտութեան հիմքերի նոյնութիւնը հաստատուած է եղանակների բազմապիսի վերլուծութեամբ: Տարբերութիւնն այն է, որ եկեղեցականը զարգարուած է գեղեցիկանքներով: այն ինչ ժողովրդականը պարզ է և անպաճոյճ: Պարսից, Արաբացուց և Յունաց երաժշտութեան ազդեցութիւնն արտաքին է միայն: Բրիտ. հնագոյն երաժշտութեան ուսումնասիրութեան համար ուշադրութեան արժանի է այս փնթնութիւնը: Հայոց երաժշտութեան հիմունքը քառալարն է (Tetrachord), որի առաջին և վերջին ձայներն անփոփոխ են մնում, իսկ միջին երկուսը վեց տեսակ փոփոխութիւն ստանում: Բառալարիւրը միշտ միացած են: Եղանակներն ու լմն են. չորսը բուն ձայն (աձ. բձ. գձ. դձ.) և չորսը կողմ (ակ. բկ. գկ. դկ.) սոցանից իւրաքանչիւրն ունի իւր յատուկ քառալարը: Եկեղեցական երգեցողութիւնից աւելի հետաքրքրական է սաղմոսերգութիւնը (Psalmodie): * Հայերը առողանութեան եօթ տեսակ նշան ունին որոշ ձայնատիմաններով, որ ուրիշ յայտնի առողանութեանց համեմատութեամբ հարուստ է: Ժողովրդական երաժշտութիւնը գեւ ևս կենդանի է ամեն անգ, ուր օտար քաղաքակրթութիւնը ազդեցիկ չէ դարձել: Ժողովրդական երգի նիւթը, ինչպէս ամենուրեք, կազմում են պատմական դէպքեր: Բնութեան երեւոյթներ, անձնական վիշտ, ուրախութիւն և ինչ բառախաղութեամբ: Գործածական են հակիրճ և զօրեղ համեմատութիւնները: Բառերի և մտքերի շեշտերը համապատասխան են երաժշտական շեշտերին: Հայոց երգեցողութեան ոճը մի առանձին փնթնութիւն ունի՝ պարսից, արաբացուց, քրդերի, տաճիկների եղանակների համեմատութեամբ:

* Այս խնդրին և վերաբերում հ. Կոմիտասի յոդուածի առաջին հատուածը: որ պարտւած է նոյն ընկերութեան ժողովածուների առաջին գրքի մէջ:

Ժողովրդական դուստներ յայտնի են պատմութիւնից, որոնց երգերի հետքերը մնացել են թորենացու և ուրիշ մասնազիրների մէջ:

Գ. Ա. Յովսէփեան



ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԴՐ. Կ. ՌԷԿԼԱՄԻ.

Բ.

ՄԱՐԴՈՒՐ ՕՊ.

Օղբ շրջապատում է երկիրն ամէն կողմից. մենք օդ ենք ներշնչում մեր կեանքի սկզբից մինչև վերջը, մեր առաջին շնչից մինչև վերջինը: Առում ու խմում ենք մենք օրական միայն 3—5 անգամ, իսկ օդը մենք ներշնչում ենք մի րոպէում 12—15 անգամ, մի ժամում միջին թուով մինչև 1,000 անգամ կամ օր ու գիշեր 20,000—25,000 անգամ, իսկ տենդի միջոցին աւելի էլ շուտ շուտ: Պատահել է որ մարդիկ մի քանի օր մնացել են առանց ուտելիքի ու խմելիքի, բայց ոչ մի մարդ առանց օդի չի կարող ապրել նոյն իսկ հինգ րոպէ: Լաւ օդը մեզ համար աւելի կարեւոր և անհրաժեշտ պահանջ է, քան կերակրի կանոնաւոր ընտրութիւնը, բայց դժբախտաբար բազմամարդ քաղաքներում աւելի գթուար է թարմ օդ գտնելը, քան ամենաթանկ ուտելիքներ ու խմելքներ:

Մրկութիւն օդը, որ շրջապատում է մեզ, երկու դաղի միացումն է և բաղկացած է 4 մաս ազոտից և 1 մաս թթուածնից (աւելի ճիշտ՝ 79 մաս ազոտ և 21 մաս թթուածին): Ազոտը ոչ մի ազդեցութիւն չունի մեզ վրայ, ոչ էլ նիւթերի փոխանակութեան վրայ. ոչ ներշնչելիս և ոչ արտաշնչելիս նա չէ ներգործում բնաւ արեան վրայ, ուտելի և մեզ համար չեղող դաղ է: Թթութեամբն, ընդհակառակը, անպայման անհրաժեշտ է մեր գոյութեան և նիւթերի փոխանակութեան գործողութեան համար: Միայն աղոտից բաղկացած և թթութեամբ չպարունակող օդում մենք չուտով խեղդուում ենք:

Մեր ներշնչած թթութեամբն թորեցից անցնում է արեան և արենադնտիկների մէջ: Այնտեղ թթութեամբն մնանում է ածխածնի հետ, որ

արևելն ստանում է պինդ կերակրից (մանուսանդ լիզերից, օւլայից և շաքարից) և օգելից քմպելներէրից: Չերմութեան ազդեցութեան տակ այս երկու նիւթից ստացուում է ածխաթթուութեամբ որ դուրս է դալիս մարմնի մէջից արտաշնչելու: Այս երկայթը ընդհանրապէս կատարուում է այնպէս, ինչպէս որ կատարուում է մոմի, լամպի կամ փայտի վառուելու գործողութիւնը: օգի թթուածինը միանում է ճարպի, ստէարինի, պարաֆինի կամ մեղրամոմի ածխածնի հետ, որոնցից մոմ է պատրաստուում: ինչպէս նաև լամպի իւղի կամ նաւթի հետ, և արտադրում է Չերմութիւն: Թթուածնի հետ միանալը կատարուում է այն ժամանակ, երբ այդ նիւթերը հալուելով՝ ծծուում են պարտոյզի մէջ և դադանման ձև են ստանում: Այսպիսի դէպքում վառուելու գործողութիւնը շատ շուտ է կատարուում, տալիս է սաստիկ տաքութիւն և լոյս, որ բոցի և կրակի յատկանշանքներն են: Իսկ ինչ վերաբերում է արեանը, այնտեղ այրուելու գործողութիւնը կատարուում է հեղուկ միջավայրում, ուստի և դանդաղ է լինում: Ըստմութիւն ուրիշ միաւորութիւններ է յառաջ բերում և տալիս է մարմնին շատ չափաւոր տաքութիւն: Սորա շնորհիւ մեր արեւն ու մարմինը սովորաբար մօտ $+37^{\circ}$ քառ Ռէօմիւրի քարեխառնութիւն է ունենում, որ առողջ մարդու համար նոյնն է լինում թէ հիւսիսային թեւեռի մօտ և թէ արեւադարձի կիզիչ արևի տակ: Այսպէս ուրեմն օգի թթուածինը մի քանի կերակրների և խմիչքների հետ նպաստում է այն բանին, որ մեր մարմինն ստանում է որոշ Չերմութիւն, մինչ նա հովանում է, երբ ջուրը գոլորշիանում է կաշու և թորերի մէջով:

Բացի ազոտից և թթուածնից մթնոլորտի օդի մէջ միշտ գտնուում է ջրի գոլորշի, ածխաթթուութեամբ, անուշադր և փոշի: Ջրի գոլորշին գոյանում է ոչ միայն մարդկանց և կենդանիների մարմինների մէջ եղած ջրի շողիւնալուց (որովհետև դորա քանակութիւնն այնքան քիչ է, որ միջին կազմուածքի տէր կենդանի մարդուց շոգիւնում է 24 ժամում ոչ աւելի քան $\frac{1}{2}$ կամ $\frac{1}{4}$ լիտր), այլ և բազմաթիւ բոյներից և ծովերի ու գետերի ջրից:

Օգի մէջ եղած ջրային շողիւնների քանակութիւնը զանազան է լինում և կախուած է այլ և այլ պայմաններից, աւելի շատ լինում է անձրևի և ձիւնը հալչելու ժամանակ, քան չոր եղանակներին: Նմանապէս աւելի գոլորշի է լինում խոր հովիտներում ու հարթավայրերում, քան սարերի ու բարձրաւանդակների վրայ: Խոնաւ օդի մէջ կենդանի կազմուածքներից քիչ ջուր է շողեալում, ուստի և մենք այդ ժամանակ ոչ միայն

ծարաւ չենք դուռ, այլ և նիւթերի փոխանակութեան գործողութեան թուլանալու պատճառով՝ մեզ աւելի թոյլ ու թմրած ենք զգում: այնպէս որ անձրևային եղանակին մենք աւելի տրամադիր ենք լինում անգործ մնալու, ուստի և խոնաւ ընտկարանները վատ ազդեցութիւն են ունենում մարդկանց վրայ:

Ածխաթթուութեամբ թայնի ներգործութիւն է անում մեր շնչառութեան գործարանների վրայ, որովհետև թուլացում է որտի գործունէութիւնը և հետեւապէս կանոնաւոր արեւնադարձութեան արգելք է լինում: Նոյն ներգործութիւնն ունի մեր կազմուածքի վրայ և մեր ներշնչած այն ածխաթթուութեամբ, որ արտաշնչում են ուրիշ մարդիկ ու կենդանիները: Օգի մէջ միշտ կարելի է ածխաթթուութեամբ դանել, որովհետև նա գոյանում է ոչ միայն մարդկանց ու կենդանիների շնչելուց, այլ և փայտի, իւղի և ւն, այրուելուց: Արքան թթուածինն անհրաժեշտ և օգտակար է մեզ համար, այնքան ածխաթթուութեամբ վնասակար է ու թուլանալու, սորա վտանգաւոր լինելը սաստկանում է այն պատճառով, որ այս թթուութեամբ գոյութիւնը կարելի է իմանալ միայն իւր արած քիմիական ներգործութեան նայելով: Բարեազդաբար ածխաթթուութեամբ մենք ներշնչում ենք չափազանց փոքր քանակութեամբ:

Եթէ ածխաթթուութեամբ օգի $\frac{1}{3}$ մաս է կազմում, երեք բոյլում մարդ մահանում է. եթէ $\frac{1}{10}$ է լինում, հետեւանք լինում է գլխի պտոյտ, գլխացաւ, ուշադնացութիւն և վերջ է վերջոյ մահ. եթէ օգի $\frac{1}{100}$ — $\frac{5}{1000}$ մասը ածխաթթուութեամբ լինի, յառաջ կը գայ գունատութիւն և արեան պահպանութիւն, որ պատահում է սովորաբար հանքերում աշխատողներին, բանտարկեալներին, գործարանների բանտարկներին, նկուղներում բռնաւորներին և առհասարակ բոլոր տանը շատ նստողներին: Աերջինները հիւանդանում են փակ սենեակում երկար նստելուց, ուր օդը շատ շուտ է փնանում ածխաթթութեամբ լինելուց: Այս տեսակէտով շատ վնասակար են պանդոկներն ու այն ննջարանները, որտեղ շատ մարդիկ են քնում:

Մաքուր, լաւ օդի մէջ լինում է ընդամենը $\frac{4}{100000}$ մասն ածխաթթութեամբ, ամենաշատը կարող լինել $\frac{1}{1000}$, որ գեա վնասակար չէ:

Մթնոլորտի թարմ օդի մէջ շատ շնչին քանակութեամբ լինում է անուշադր, քաղաքներում աւելի է լինում, փողոցների անմաքութեան պատճառով, քան գիւղերում, ուր լինում է առաւելապէս անասունների աղբախլոյտերի մօտիկ տեղերում: Գիւղացուց համար անասունների աղբը թանկադին բան է կամ ինչպէս վառելիք կամ ինչպէս հողը բարւոքելու միջոց,

ուստի և նորա տղեր ցնում են ուր ասեալ աների առաջ, ջրհորների մօտ և չն՝ և չեն նկատում, թէ ինչքան մեծ վնաս են տալիս գործնով իրենց ու իրենց երեխաներին: Գիւղերի բնակիչները չեն էլ մտածում, թէ քանի քանի երեխաներ հրեանդանում, մեռնում են աղբակոյտերի ապականած օգի պատճառով: Նոյն վտանգին ենթարկուում են և քաղաքացիք, երբ աղտոտ բակերով բնակարաններ են վարձում:

Մաքուր և առողջարար կոչուում է այնպիսի օդը, որ ապականուած չէ ոչ ճահիճների, լճացած ջրերի, աղմոտ գետերի, աղբի գոլորշիներով, ոչ մարդկանց, ձիթի ճրագների, մոմերի ու լամպերի արտադրած գաղերով, և ոչ փոշով: Լաւ օդը ոչ գոյն ունի և ոչ հոտ: Սենեակներում եղած օդը միշտ փճացած է լինում ու անառողջ, ուստի պէտք է որքան կարելի է շուտ շուտ ու երկար ժամանակով պատուհանները բաց անել, որպէս զի թարմ օդը թափանցէ սենեակների մէջ և այնտեղից դուրս մղէ ապականուած օդը: Եւստ մարդիկ սենեակի օդը մաքրելու համար առաւօտները պատուհանը մի ժամ բաց են թողնում և կարծում են, թէ իրենց ուղածն եղաւ: Այդ գրեթէ մի և նոյն բանն է, թէ մի բաժակի կեղտոտ, սղոտոր ջրի մէջ մարդ մի գդալ մաքուր ջուր ածէ և յոյս ունենայ թէ բաժակի ջուրը կը մաքրուի: Զրի այս ձևով մաքրելու անհնարին լինելը պարզ է ամէն մարդու համար, իսկ սենեակի օդը յիշեալ եղանակով մաքրելու անկարելի լինելն ապացուցանել դժուար է: օդը գոյն չունի, մեր հասառութիւնն այնպէս նուրբ չէ, որ հոտով ճանաչենք լաւ ու վատ օդը, ուստի և մեծ մասամբ մարդիկ անզիտակցաբար ապականուած օդ են ներշնչում և սաստիկ վնասում իրենց:

Ով որ կամենում է իւր առողջութիւնն ու ոյժերը պահպանել, այլ և նիւթերի փոխանակութեան կանոնադրութիւնը՝ պէտք է մեծ խնամք ասնէ իւր բնակարանի օգի մաքրութեան վրայ և որքան կարելի է յաճախ ու երկար ման գայ բաց օդում մանաւանդ անառաւում: Ննջարանների օդը, քնելուց առաջ, պէտք է այնքան մաքուր ու թարմ լինի, որ առաւօտը կարելի չլինի հոտիցն իմանալ, թէ այնտեղ մարդ է քնել: Ննջարանների և առհասարակ բնակութեան սենեակների վատ հոտը կարելի է վերջացնել միմիայն օդը փոխելով:

Առանձին խնամք պէտք է տանել մանուկայն աչն սենեակների օգի մաքրութեան վրայ, ուր մարդիկ օրուայ մեծ մասն են անցկացնում, այդինքն առանձն-սենեակների, ննջարանների, արհեստանոցների, դասարանների և այլն:

Սենեակի օգի մաքրութիւնը կախումն ունի

նորա մէջ եղած փոշու, վնասակար գոլորշիների, գաղերի քանակութիւնից, այլ և անընդհատ մշտական օդափոխութիւնից (վենաիլացիա):

Փոշուց սենեակները կարելի է ազատ պահել միայն չափազանց մաքրութեան շնորհիւ: Եւստ կարելւր է փոշոտ փողոցից տուն մանելուց առաջ լաւ մաքրել հօշիկներն ու շարերը. այնուհետեւ ամենայն օր յատակները լուսնալ, օրը մի քանի անգամ մաքուր շորի կտորով սրբել կահ կարասիքի փոշին և այլն: Պարզ բան է, որ որքան բնդարձակ լինի բնակարանը, այնքան հեշտ է մաքուր ու կարգին պահել:

Վնասակար գոլորշիներ գոյանում են սենեակներում այն ժամանակ, երբ երկար ժամանակ պատուհանները բաց չեն անում: Վահ կարտիքը, շորերը, հօշիկները, տախտակէ յատակները, պատերը, մի խօսքով ամէն բան, ինչ որ սենեակում գտնուում է, մարդկանց ու կենդանիների նման զանազան գաղեր են արտադրում, որոնց թուում և ածխած թուում: Այս պատճառով պէտք է խոյս տալ բոտ կարելոյն՝ սենեակներում շատ կարասիք պահելուց:

Օդափոխութիւն. Սենեակի օդը թարմացնելու համար բաւական չէ մի պատուհան կամ մի դուռը բաց անելը. սենեակի օդը բոլորովին կը փոխուի ու կը թարմանայ միայն այն ժամանակ, երբ միաժամանակ երկու հակառակ կողմերից պատուհաններ են բաց մնում կամ մի պատուհան և մի դուռն հակառակ կողմից: Նոյն իսկ փակ սենեակներում միշտ մաքուր օդ ունենալու համար դիմում են զանազան եղանակների, որոնք հիմնուած են զլխաւորապէս այն երեւոյթի վրայ, որ սենեակներում տաքացած օդը բարձրանում է դէպի վեր, իսկ դրոնց եկած աւելի զով օդը մնում է ցածումը: Այսպէս, օրինակ, հէնց տունը շինելիս օդափոխութեան համար անցքեր են շինում յատակի տակ և առաստաղի մօտ, վերելում, ցածի անցքից բաղմամբիւ մանր ծակերով դրոն օդն է ներս մտնում, իսկ վերի անցքերով ներսի ապականուած օդը դուրս է գնում: Եթէ տունն այդպիսի յարմարութիւններով չէ շինուած, մնում է սենեակների օդը փոխել լուսամուտներ ու դռներ բաց անելով կամ լուսամուտների օդանցքները բաց թողնելով: Զմեռը օդափոխութեան որոշ չափով նպաստում են վառարանները:

Օդափոխութեան առանձնապէս կարօտ են այն սենեակները, որտեղ մարդիկ թէ բնում են և թէ կերակուր են եփում:

Բոլորովին սխալ է այն կարծիքը, թէ գիշերը ննջարանի պատուհանը բաց քնելը վնասակար է. գիշերուան օդը վնասակար է միայն ճահճային տեղերում, իսկ չոր տեղերում ու լեռ-

ներում գիշերուան օդը ցերեկուանիցն էլ մաքուր է ու առողջարար: Տարուայ տաք եղանակներն գիշերներն էլ դրոշմ թարմ օդ չնչիլ ցանկացողները կարող են աւելի յարմարութեամբ այսպէս անել: Եթէ ննջարանին կից ուրիշ սենեակ կայ, այդ սենեակի լուսամուտները կարելի է բաց թողնել և ապա նոցա միջի դուռը:

Ի դուռ են նոյնպէս չափազանց վախենում սենեակներում երկու հակառակ կողմից փչող քամուց: այդպիսի քամին վնասակար է քրանած և թոյլ մարդկանց համար, որոնք առհասարակ հեշտ են մթնում:

Բնակարանները օդի մաքրութիւնը մեծ կախումն ունի նաև նորա առատութիւնից: սենեակն ընդարձակ է համարուում և առատ օդ ունեցող է երբ մի հոգուն գալիս է մօտաւորապէս 18—20 խորանարդ մետր օդ:

Մեծ ու բազմամարդ քաղաքների բնակիչների շատ հիւանդութեանց պատճառը մաքուր օդի պակասութիւնն է: Մարդկանցից շատ շատերը չեն հասկանում, թէ ինչքան վնասում է իրենց վատ օդը: ապա թէ ոչ չէին ապականիլ իրենց բնակարանների օդն այնպէս, ինչպէս, օրինակ, անում են բոլոր ծխողները:

Ծխախոտը, չնորհիւ իւր պարունակած «նիկոտինի» թունաւոր ներգործութիւն է անում ծխողի վրայ (որ հեշտութեամբ կարելի է նկատել, երբ մարդ առաջին անգամն է ծխում), իսկ ծխախոտի ծխի մէջ մեծ քանակութեամբ եղած վնասակար գազերը վնասում են և ուրիշներին, որոնք ակամայ ներշնչում են այդ ծուխը: Ծխախոտի թունաւոր ներգործութիւնը մահ չէ առաջ բերում, բայց կարող է թուլացնել մարդու ֆիզիքական, մտաւոր, և սրտի գործունէութիւնը: Մարդու ներարդերի սաստիկ գրգռուած ու լարուած ժամանակ ծխախոտը կարող է հանդստացնող աղդեցութիւն ունենալ: Երկարատեւ ծխելը վնասում է ծխողին ու իւր շրջապատողներին, որոնք ստիպուած են լինում ներշնչել ծուխը:


Միայն անքաղաքավարի մարդիկ թոյլ են տալիս իրենց ուրիշների հետ հացի նստած ժամանակ՝ ճաշից յետոյ անմիջապէս ծխել, առանց սեղանակիցներից թոյլտուութիւն խնդրելու:

Քրախոտը (բուսնօթի) այն առաւելութիւնն ունի միայն, որ ուրիշներին չէ վնասում, բայց ուրիշների ներկայութեամբ քաշելը նոյնպէս անշուք է քան է, որովհետև չքաշողները մեծ մասամբ զգուշում են քթախոտի հոտիցն ու քաշողների անմաքրութիւնից:

Թոճերը մաքրելը. Ամենալու օդն ու ամենաընդարձակ բնակարանը մարդու վրայ բարեբար աղդեցութիւն չեն անիլ, եթէ նա մաքուր

օդ չներմուծէ իւր մարմնի ու արեան մէջ: Այս նպատակով պէտք է խոր շունչ քաշելով ու արտաշնչելով փոխել թորերի օդը: Ինչպէս որ սենեակները օդն ենք թարմացնում: Արեւմ թաքերին էլ է օգտափոխութիւն հարկաւոր: Այդ մէքը կատարում ենք մասամբ խօսելով, երգելով, ծիծաղելով և մեր միանունքն աշխատեցնելով: Մարմնամաքրութեամբ պարապելիս մենք ակամայ ստիպուած ենք լինում աւելի շուտ շուտ ու խոր շունչ քաշել, ուստի և մարմնի վարժութիւններն էլ բարեբար աղդեցութիւն են անում արեւագարծութեան և շնչառութեան գործողութեան վրայ: Բացի սորանից բաց օդում ման դալու ժամանակ մարդ պէտք է թարմ օդը ներշնչէ որքան կարելի է խոր և ուժով, եթէ միայն քրանած չէ:

Մասնաւորապէս շնչառութեան թոյլ գործարաններ ունեցողներն ու քառասուն տարին անցրած մարդիկ լաւ կ'անեն, եթէ օրական դռնէ երեք անգամ հետեւեալ եղանակով մարդէն իրենց թորերը պէտք է 40—50 անգամ իրար յետեւից անընդհատ՝ խոր ու օթանց շտապելու մաքուր օդ ներշնչեն ու արտաշնչեն: Անսովոր մարդու դուրը տասներորդ անգամից յետոյ կարող է պոյոյս դալ. այդպիսի դէպքում պէտք է փոքր ինչ հանգիստ առնել և ապա շարունակել մինչև վերջը: Այս ձևով մարդ սովորում է ուժով ու խոր շունչ քաշել ու արտաշնչել, այնպէս որ մի քանի ժամանակից յետոյ կարող է յեշեալ վարժութիւնն անել անընդհատ:



ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Ինչպես են համում վայրենիները:—Նոր Գուինայի և Աւստրալիայի մէջ ընկած կղզիների վրայ մի վայրենի ժողովուրդ է ապրում, որը երեքից աւելի չի կարողանում համբել. Մնացեալ բանաւոր համբանքն այսպէս են կազմում. օրին. չորս ստանալու համար երեք վրայ մի միութիւն են աւելացնում և կամ երկուսի վրայ երկու գնում: Մարդուս մարմնի զանազան անգամներն ծառայում են նրանց համար իրրեւ հաշուի բաղկացուցիչ մասեր: Սկսում են հաշուել ձախ ձեռքի ձկոյթից, յետոյ անցնում են միւս մնացեալ մասներին և ապա համբում նոյն ձեռքի դաստակը, արմունկը, բազուկը, անութը, ուսը և կրծոսկրը: Լրացնելով մարմնի մի կողմի մասերը, սկսում են հաշուել աջ ձեռքի միայն հակառակ ուղղութեամբ, թեի վերին մասերից մինչև ձկոյթը: Մարմնի այս մասերով համբանքը 21-ի է համեմատ յետոյ համբում են ոտի տասը մատը, որով ըստացում է 31. իսկ մնացեալ թուերը նրանց մա-